ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< >> հոկտեմբերի 2010թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԱԲՐԻԵԼ ՋԵՄԲԵՐՋՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

<<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի պատվավոր նախագահ, սիրիահայ գործարար, բարերար Գաբրիել Ջեմբերջյանին շնորհել <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ԳԱԲՐԻԵԼ ՋԵՄԲԵՐՋՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամի պատվո նախագահ Գ. Ջեմբերջյանը ծնվել է Սիրիայի Արաբական Հանրապետության Հալեպ քաղաքում, ավարտել է տեղի Կրթասիրաց վարժարանը, ապա տեղափոխվել մշտական բնակության Դամասկոս:

<<Փյունիկ>> բարեգործական հիմնադրամն իր գործունեությունը ծավալել է 1998թ. սիրիահայ գործարար, բարերար Գաբրիել Ջեմբերջյանի նախաձեռնությամբ: Հայաստանում հիմնադրամը պաշտոնական գրանցում է ստացել 2008 թվականի դեկտեմբերին:

Իր գործունեության շուրջ 10 տարիների ընթացքում հիմնադրամը Հայաստանում մեծածավալ ծրագրեր է իրականացրել: Գ. Ջեմբերջյանի բարեգործության շրջանակը ներառում է Հայաստանի և Սփյուռքի կրթության, գիտության, մամուլի, եկեղեցաշինության և բազմաթիվ ազգօգուտ ոլորտներ:

Գ. Ջեմբերջյանի անմիջական նախաձեռնությամբ 2009-2010թթ. ընթացքում հիմնադրամը Երևան քաղաքին նվիրել է 145 խաղահրապարակներ, որոնք կառուցվել են քաղաքի մանկապարտեզներում և բակերում, ինչպես նաև օժանդակել է Երևանում տարբեր միջոցառումների և ծրագրերի իրագործմանը:

Բարեգործը մեծ օգնություն է տրամադրել Դամասկոսում Հայաստանի դեսպանատան հիմնադրմանը, մեծ ներդրում է ունեցել հայ-սիրիական կապերի հաստատման ու ամրապնդման գործում:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԳԱԲՐԻԵԼ ՋԵՄԲԵՐՋՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Գաբրիել Ջեմբերջյանին <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ